

## Արձանագրություն N 2-03/17

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդի 2017 թ.-ի  
մարտի 13-ի նիստի

Ներկա էին՝ Թորքմաջյան Հ.Վ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գուլյան Ա.Ա. (կ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Իսրայելյան Ռ.Գ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գասպարյան Պ.Յու. (տ.գ.թ., դոցենտ), Հարությունյան Մ.Ա. (պ.գ.թ.), Առաքելյան Ա.Ա., Սայիյան Ռ.Գ., Բաղունց Գ. Ռ., Հակոբյան Շ.Հ., Շահբազյան Ա.Վ., Դավթյան Շ.Ա., Աբաղյան Մ.Գ. (ուսանող), Ծատրյան Ս.Բ. (ուսանող), Առուշանյան Գ.Ա. (ուսանող), Պետրոսյան Ա.Կ. (ուսանող):

Հրավիրված էին հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Շահնազարյան Ս.Ա. (գ.գ.թ.դոցենտ), Գալստյան Ս.Բ. (գ.գ.թ., դոցենտ.) և Հարությունյան Ռ.Մ.:

### Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1.ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Այգեհովիտ և Քարեգահ գյուղերի ջրամատակարարաման համակարգի կառուցման նախագծերի մասին.

2.ԼՂՀ Մարտունու շրջանի Կարմիր շուկայի դպրոցին գույք նվիրաբերելու մասին.

3.Այլ հարցեր

**Լսեցին 1-**ԼՂՀ քաղաքաշինության նախարարության 2017թ.-ի մարտի 10-ի N 188-05 գրության մասին, համաձայն որի առաջարկվում է իրականացնել ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Այգեհովիտ և Քարեգահ գյուղերի ջրամատակարարաման համակարգի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:

**Որոշեցին 1.1-**Հիմք ընդունելով ԼՂՀ քաղաքաշինության նախարարության 2017թ.-ի մարտի 10-ի N 188-05 գրությունը ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Այգեհովիտ և Քարեգահ գյուղերի ջրամատակարարաման համակարգի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ստեղծման համար ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

1.Պավլիկ Յուրիկի Գասպարյան (ՇՏՀ պրոռեկտոր)-ղեկավար,  
անդամներ՝

2.Պարգև Հովհաննեսի Բալջյան-նախագծի գլխավոր ինժեներ,

3.Հարություն Վանյայի Բայունց-ավագ նախագծող,

4.Հովհաննես Գեորգիի Քելեջյան-նախագծող,

5.Հրաչ Ղահրամանի Հարությունյան-կոնստրուկտոր:

**1.2-**Հանձնարարել ճարտարապետաշինարարության ֆակուլտետին ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Այգեհովիտ և Քարեգահ գյուղերի ջրամատակարարաման համակարգի

կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ստեղծման գործընթացի ժամանակ կազմակերպել փորձուսուցումներ համապատասխան մասնագիտությունների ուսանողների համար:

**Լսեցին 2-** ԼՂՀ Մարտունու շրջանի Կարմիր շուկայի դպրոցում հեռավար դասընթացներ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ գույք նվիրաբերելու առաջարկով հանդես եկավ ռեկտոր՝ Հ.Թոքմաջյանը:

**Որոշեցին 2-** ԼՂՀ Մարտունու շրջանի Կարմիր շուկայի դպրոցին նվիրատվության կարգով տրամադրել 1/մեկ/ հատ պրոյեկտոր Epson EB-S31 տիպի, 1/մեկ/ հատ էկրան Lumien տիպի, 1/մեկ/ տեսախցիկ Web Cam Genius iSlim 2020AF տիպի, 1/մեկ/ հատ բարձրախոս Genius HF160, 1/մեկ/ հատ աղապտեր համակարգչային GEMBIRD UAE-30M:

**Լսեցին 3-** ՌԴ Նովոսիբիրսկի պետական ճարտարապետաշինարարական ինստիտուտում «Ջրօգտագործման և բնօգտագործման էկոլոգիապես անվտանգ տեխնոլոգիաներ» թեմայի շրջանակներում կայանալիք միջազգային գիտաժողովի մասին:

**Որոշեցին 3-**Սույն թվականի հունիսի 18-22-ը Շուշիի տեխնոլոգիական համալսարանի 3 հոգուց բաղկացած պատվիրակությանը՝ ռեկտոր Հ.Թոքմաջյանի գլխավորությամբ, գործուղել ՌԴ Նովոսիբիրսկ՝ «Ջրօգտագործման և բնօգտագործման էկոլոգիապես անվտանգ տեխնոլոգիաներ» թեմայի շրջանակներում կայանալիք միջազգային գիտաժողովին մասնակցելու նպատակով: Պատվիրակության կազմում ընդգրկել այն դասախոսներին, որոնց զեկուցումները ընդունվել են Նովոսիբիրսկի պետական ճարտարապետաշինարարական ինստիտուտի կողմից:

**Նախագահ՝** ստորագրություն **Հ.Վ.Թոքմաջյան**

**Քարտուղար՝** ստորագրություն **Ա.Ա.Առաքելյան**